2020 ԹՎԱԿԱՆԻ **ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ**
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարման ուղղված քայլերը**
Կրթական տեխնոլոգիա-ների ազգային կենտրոն	09.06.01.	«13. Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականու-թյան ապահովում»	Կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման և դրա շարունակականության ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝ **Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) կառավարում** • իրականացվել է 1414 ուսումնական հաստատություններ ընդգրկող ցանցի աշխատանքի ամենօրյա հսկողությունը. • վերահսկվել է ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքը, • կատարվել է դպրոցների էլեկտրոնային հասցեների օգտագործման ստուգումը, • հաշվառվել է դպրոցների օգտագործած ինտերնետի ծավալը, • կատարվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկման աշխատանքները, • իրականացվել է ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող սերվերների տեխնիկական սպասարկումը. ապահովվել կայքերի անխափան աշխատանքը, ՀԿՑ-ում ապահովվել են. • արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանությունը, գործել են ինտերնետային պարունակությունը հնարավորինս սահմանա-փակող ֆիլտրային ծրագիրը, տվյալների փաթեթների դինամիկ ուղղորդումը, ցանցում եղած բոլոր համակարգիչների ավտոմատ թարմացումով հակավիրուսային կենտրոնացված համակարգը, • կապուղու ծանրաբեռնվածությունը ցուցադրող, գրանցող և վիճակագրական տվյալներ հավաքող առցանց համակարգի, ՀԿՑ ընթացիկ վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի, ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետային

			կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների համակարգի գործունեությունը, • ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների համար իրականացվել է վիճակագրական տվյալների հավաքման և SQL համատեղելի բազայի ու WEB սերվերի վրա տեղադրված ուսումնական հաստատությունների էջերի տեխնիկական սպասարկման, էլեկտրոնային փոստի վարման աշխատանքների իրականացումը, • կազմվել են համապատասխան ամսական հաշվետվությունները: **Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործում** • Նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում ՇԻՀԿ-ի շահագործումը ժամանակավորապես դադարեցվել էր: Հեռավար ուսուցման կազմակերպմանն աջակցելու նպատակով վերանայվել է և խմբագրվել ՇԻՀԿ-ի գործունեության ծրագիրը (դասընթացները կվերսկսվեն հոկտեմբերից): **«Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքի կազմակերպում, ԿՏԱԿ-ի և այլ կայքերի վարում** • իրականացվել է **«Հայկական կրթական միջավայրի»** (www.armedu.am) տեխնիկական սպասարկման աշխատանքը, հարստացվել է բովանդակային պարունակությունը, • իրականացվել է պորտալի ենթակայքերի սպասարկումը. ✓ **«Հայկական կրթական միջավայր» ֆորում**. (http://forum.armedu.am, շուրջ 2370 թեմա, 81472 գրառում, 6162 գրանցված օգտվող). ստեղծվել են 30 նոր ուսումնամեթոդական և մասնագիտական խորհրդատվական թեմաներ, կատարվել է 2052 գրառում, գրանցվել է 332 նոր մասնակից, ✓ **«Պաշարների շտեմարան» կայք**. (http://lib.armedu.am, ավելի քան 10083 պաշար,

			շուրջ 8120 գրանցված օգտվող). ըստ դասակարգված բաժինների տեղադրվել են շուրջ 273 նոր էլեկտրոնային պաշարներ (այդ թվում՝ ուսումնական և մեթոդական նյութեր, կրթական փաստաթղթեր, «Կրթություն 2020» շաբաթաթերթի համարները և այլն), ստեղծվել է «Տարեկան աշխատանքային պլաններ 2020-2021» բաժինը, ավելացվել է «Դպրոցների թղթապանակներ» բաժնի բովանդակությունը: ✓ **«Հեռավար ուսուցում» համակարգ.** (http://elearning.armedu.am/), կազմակերպվել են հեռավար դասընթացներ. • շուրջ 1410 ուսուցիչների համար՝ «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով երեք արագացված դասընթացներ. ակտիվ մասնակցության և առարկայական հեռավար դասընթացների նախագծեր մշակելու համար 942 ուսուցիչներ ստացել են ԿՏԱԿ-ի հավաստագրեր, • տարբեր մասնագետներ վարել են 32 դասընթացներ 1086 գործընկեր-ուսուցիչների համար, • հաջողված հեռավար դասընթացները, ավարտից հետո, տեղադրվել են նաև **«Հեռավար ուսուցման կենտրոն»** (https://dlc.armedu.am/) նոր համակարգում՝ բոլոր այցելուների համար բաց և հասանելի ձևով (հյուրի կարգավիճակով), ✓ կրթական գործընթացի շարունակականությունը հեռավար ուսուցման և առցանց գործիքների միջոցով կազմակերպելու աշխատանքին աջակցելու նպատակով ստեղծված **«Հեռավար ուսուցման համալիր էջը»** (https://heravar.armedu.am/). կրթության ոլորտի կազմակերպիչներին և շահառուներին տրամադրվել է. • ուսումնական կայքերի օգտակար հղումներ՝ կից համառոտ նկարագրությամբ, • հեռավար ուսուցման հարթակների, գործիքների նկարագրություններ և դրանց կիրառության

			մասին համառոտ ուղեցույցներ, • հեռավար, առցանց ուսումնական գործընթացի ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին լուրեր, նորություններ, հայտարարություններ, • հետադարձ կապի հնարավորություն, ✓ իրականացվել են **ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի** (http://escs.am/am) անհրաժեշտ էջերի ռուսերեն և անգլերեն թարգմանության, կայքում նյութերի տեղադրման աշխատանքները, ✓ ՅուԹուբ-ի **«Կրթական ալիքում»** https://www.youtube.com/user/armeduchannel/ տեղադրվել են կրթական և մշակութային ենթաբաժինների տեսանյութերը, այդ թվում՝ «Google Classroom», «Microsoft Teams» համակարգերի «Ուսումնառության համ-ընդհանուր ձևավորում» դասընթացների ուսուցողական տեսահոլովակները, ✓ իրականացվել է ԿՏԱԿ-ի (www.ktak.am) կայքի բովանդակային սպասարկումը ✓ **Շահագործվել են Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի** (http://etwinningplus.armedu.am/), **E-school Armenia** (http://e-school.am/) և **«Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»** (http://esource.armedu.am/) **կայքերը**, ✓ **«Դպրոցական կայքեր»** տիրույթում գործող դպրոցների կայքերի (http://schoolsite.am/) շահագործմանն աջակցելու նպատակով տրամադրվել է խորհրդատվություն: **Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում.** • իրականացվել է Կրթության առանձնահատուկ

			պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման էլեկտրոնային համակարգի պիլոտային շահագործման արդյունքների վերլուծություն, Հանրապետական մանկավարժա -հոգեբանական կենտրոնի մասնագետների առաջարկությունների քննարկում, • տեղական ու միջազգային կազմակերպու-թյունների հետ համագործակցության նպատակով կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, մասնավորապես. ✓ առցանց հանդիպում լիբանանյան IQUAD Learning Solutions կազմակերպության ներկայացուցչի հետ, ✓ ԿՏԱԿ–ի տնօրենը մասնակցել է հեռավար կրթության կազմակերպման, կրթության կառավարման համակարգերի աշխատանքների վերաբերյալ տարբեր հեռավար հարցազրույցների, քննարկումների: **Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականության ապահովում** • համակարգվել է ծրագրի մասնակից ավելի քան 550 դպրոցների շուրջ 1840 ուսուցիչների աշխատանքը (այժմ իրականացվում է 226 նախագիծ), • Իթվինինգի դեսպանների կողմից անցկացվել է հունիսի 29-ին մեկնարկած «Իթվինինգի հիմունքներ և մեդիա գործիքներ» թեմայով 3 նոր դասընթաց՝ շուրջ 100 մասնակիցների համար, • Իթվինինգ Հայաստան ծրագրի երկու անդամ մասնակցել են սեպտեմբերին կայացած Իթվինինգի աջակցման ծառայությունների և գրասենյակների համար նախատեսված եռօրյա աշխատանքային առցանց հանդիպմանը, • գործարկվել է https://www.etwinning.net/ պորտալի (https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus.htm) հայերեն բաժինը, թարգմանվել և տեղադրվել են անհրաժեշտ տեքստերը, ինչպես նաև ապահովվել է ընթացիկ տեղեկատվության տրամադրումը: **Կրթության կառավարման տեղեկատվական**

			համակարգի՝ ԿԿՏՀ-ի շահագործում և ամբողջացում • իրականացվել է Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատու-թյուններ ընդունելության առցանց համակարգի ներդրման և շահագործման բովանդակային և տեխնիկական աջակցություն ուսումնական հաստատություններին, դիմորդներին, • կատարվել են ԴԿՏ համակարգի տեղեկատվության մշտական ստուգման, բազաների ամենօրյա մաքրման, պարբերական թարմացումների, ուղեցույցերի մշակման աշխատանքներ, • իրականացվել է հանրակրթական դպրոցների դասավանդողների համար ԴԿՏՀ–ում շահագործված 2020-2021 ուստարվա «Էլեկտրոնային մատյան» ենթահամակարգի, տնօրենների և փոխտնօրենների համար մատյանների վերահսկման գործիքի շահագործման բովանդակային սպասարկման աշխատանքը, «Էլեկտրոնային օրագիր» հավելվածում ծնողներին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն, • կազմակերպվել է ամենօրյա բովանդակային և տեխնիկական աջակցություն–սպասարկում՝ դպրոցների տնօրեններին և օպերատորներին, ինչպես զրուցարանի, այնպես էլ հեռախոսային կապի միջոցներով, ինչպես նաև Զրուցարանի վարման, խորհրդատվության տրամադրման աշխատանքներ՝ ծանրաբեռնված աշխատա-կարգով (ներառյալ շաբաթ և կիրակի օրերը), • շարունակվել է Առաջին դասարանցիների ընդունելության հայտագրման առցանց համակարգի շահագործման բովանդակային աջակցությունը շահառու տարբեր խմբերին. ծնողներ, ուսուցիչներ, դպրոցների վարչական աշխատողներ, • իրականացվել է հայտագրման ընթացքում ստացված նամակների, դիմում–բողոքների մեջ բարձրացված խնդիրների ուսումնասիրություն, պատասխան գրությունների և պարզաբանումների պատրաստում ու ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ և քաղաքացիներին:

			Հանրակրթական ուսումնական հաստատու-թյունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում • պատրաստվել են բազմաթիվ վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍՆ, միջազգային տարբեր կառույների հայաստանյան գրասենյակների, ՋԼՄ-ների, տեղական և միջազգային ՀԿ-ների, այլ շահագրգիռ կազմակերպությունների: **Հեռավար կրթության խնդիրների և բացերի ուսումնասիրություն** • կազմակերպվել է հարցման դաշտային աշխատանքների իրականացում, ընտրանքում ներառված մասնակիցների (աշակերտ, ծնող, ուսուցիչ) էլեկտրոնային հասցեների հավաքագրում, ճշտության ստուգում, նրանց մասնակցության ցանկության և հնարավորության առկայության ճշտում, ընտրանքի մարզային, քաղաքային և գյուղական համայնքների ներկայացուցչականության ապահովում: **Հեռավար ուսուցման կենտրոնի աշխատանքի կազմակերպում** • տարվել են նախապատրաստական աշխատանքներ առարկայական մասնագետներ չունեցող 5 դպրոցներում բնագիտական առարկաների դասավանդումն հեռավար ձևով կազմակերպելու համար. ✓ ընտրվել են փոքրաթիվ աշակերտաքանակ և քիչ դասաժամ ունեցող դպրոցները, ✓ ընտրվել են դասընթացավարները, ✓ ընթանում է աշակերտների և համապատասխան մասնագետների գրանցման և դասընթացների տեղադրման աշխատանքները «Հեռավար

			ուսուցում» համակարգի (https://dlc.armedu.am/)՝ իրենց ուսումնական տարածքներում: **Հեռավար տեսահանդիպում-խորհրդատվու-թյունների կազմակերպում** • ԿՏԱԿ-ը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ, օգոստոսի 3-21-ը կազմակերպել է 17 դպրոցական առարկաների 94 հեռավար դաս-խորհրդատվություն և տեսահանդիպում՝ հեռավար կրթությունից դուրս մնացած 2-րդից 8-րդ դասարանների աշակերտների համար, ամբողջական տեղեկատվությունը (առաջադրանքներ, աշխատակարգ) տեղադրվել է E-school Armenia կայքում՝ http://e-school.am/tasks: **Հեռավար ուսուցման կազմակերպում** • կենտրոնացված հեռավար ուսուցման կազմակերպման նպատակով ԿՏԱԿ-ում ստեղծվել է «Հեռավար ուսուցման կազմակերպում» բաժինը. ձևավորվել է ուսուցիչների, մենթորների, ավագ ուսուցիչների և նկարահանող խմբից բաղկացած անձնակազմ, • կենտրոնացված հեռավար ուսուցման գործընթացի շրջանակներում ✓ ուսումնական առարկաների հեռավար դասընթացներն իրականացվում են շուրջ 3500 աշակերտների համար, ✓ դասընթացները վարվում են 1-ից 12-րդ դասարանների համար՝ ներառյալ ավագ դպրոցի առկա հոսքերը, ✓ կրթական բովանդակությունն աշակերտներին մատուցվում է տեսադասերի, վեբինար հանդիպումների և էլեկտրոնային նյութերի միջոցով: • Ուսուցիչների համար առցանց դասավանդման հմտությունների զարգացման նպատակով e-school Armenia նախագծի շրջանակում մշակվել են **«Google Classroom» և «Microsoft Teams» «Ուսումնառության համընդհանուր ձևավորում»** դասընթացները (հասանելի են ՅուԹուբի

			«Հայկական կրթական ալիքում»), ուսուցիչների համար կազմակերպվել են վեբինարների շարքեր՝ դասընթացների Ֆեյսբուքյան համայնքներում: **ՀՀ ուսումնական հաստատություններում (դպրոց ՊՈԱԿ-ներում) կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և համակարգիչների ծրագրային սպասարկման համապատասխան համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություն** իրականացվել է. • ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկում՝ սերվերային սարքավորումների և սերվերային համակարգերի սպասարկում, դպրոցների ինտերնետ տրաֆիկի մոնիտորինգ, • կապի սարքավորումների սպասարկում՝ առցանց կարգավիճակի ապահովում, վերատեղադրում, փոխարինում, կարգավորում և այլն, • տեղային համակարգչային ցանցերի սպասարկում, • համակարգչային ծրագրային ապահովման սպասարկում: